

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի (Վերջ)	97
ԾԻՍԱԿԱՆ	
ՃԵՄԺԵՄԻԱՆ Հ. ՍԱՀԱԿ. — Պատկերա- գր ձեռագիր Մաշտոցների լույսին տակ	116
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ	
ԱՆՏՈՆԵԱՆ Հ. ՌԱՓԱԷԼ. — Իմաստասիրա- կան տարրեր հայ վերածնունդի պատմու- թեան մէջ (Շարք)	158
ԼԵՃՈՒԱԿԱՆ	
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՅԱԿՈԲ Մ. — Արքայադր Մի- քայ Սեբաստացու շարահիւսական ըմ- բռնումները (Վերջ)	141
ԿՐՕՆԱԿԱՆ	
ԶԷԻՅԱՆ Հ. ԼԵՆԻՆ. — Արդի ֆալսեթ- բուրժուական եւ եկեղեցին (Վերջ)	134
ՀՆԱԽՕՍԱԿԱՆ	
ԿԱՐԱՍԵԱՆԻ Գ. — Հայաստանի ֆալսեթ- բուրժուական եւ պղնձի դարի յուշարձան- ների պեղումները	124
ԳՐԱԿԱՆ	
ԹՈՐՈՍԻԱՆ Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Տանքէ եւ իր գործը (Շարք 3)	109
ՆԱԶԻՆԻԱՆ ԱՐՏԱՇԷՍ. — Հայ ժողովրդական բանահիւստութեան նիւթերի հաւաքումը Հայաստանում	168
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Երազներ կողմէն — Կակաշները	171
Արեւմտք	172
Աշունք	173
Լեռնային վրայ	174
Ե. Չարեանց վերնախնայի մէջ	175
ՇԻՐԱԶ ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Քառերկեր (Շարք)	178
ՄԱՀԱԳՐԱԿԱՆ	
ՔԻՐՈՍԵԱՆ Յ. — Հայագետ Փրոֆ. Իլիա Ա- բուլատչի մահը	156
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
ՃԱՆԱՇԻԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Աստղագետ Վիկ- տոր Համբարձումեանի Ս. Ղազարի մէջ	181
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՊԵՏԻԿԵԱՆ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Les mo- numents arméniens du IV ^e au XVII ^e siècle — Edouard Utudjian	187
ՊԵՏԻԿԵԱՆ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Architettura medievale armena	189
ՊԵՏԻԿԵԱՆ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Hakhpat — Documenti di architettura armena, N ^o 1. Documents of Armenian ar- chitecture, N ^o 1	191

SOMMAIRE

	PAGE
PHILOLOGIE	
ANANIAN P. PAUL. — La vie de St. Mesrop (Fin)	97
LITURGIE	
DJEMDJEMIAN P. SAHAK. — Le Sa- crament du mariage à la lumière de manuscripts des Machtotzs	116
PHILOSOPHIE	
ANDONIAN P. RAPHAEL. — Elé- ments philosophiques dans l'histoire de la renaissance arménienne (Suite)	158
LINGUISTIQUE	
MEKHITHARIAN HAKOP M. — Les idées syntaxiques de l'Abbé Mekhi- thar (Fin)	141
RELIGION	
ZEKIYAN P. LEON. — La civilisation moderne et l'Eglise (Fin)	134
ARCHEOLOGIE	
CARAKHANIAN G. — Fouilles de mo- numents en Arménie des époques paléolithique, néolithique et de bronze	124
LITTERATURE	
TOROSSIAN P. J. — Dante et son œu- vre (Suite)	109
NAZINIAN ARTACHÈS. — Recueil des matériaux de la poésie populaire arménienne	168
HOVHANNESIAN P. VAHAN. — L'île des songes — Les tulipes	171
Crépuscule du soir	172
L'automne	173
Sur la lagune	174
Tcharentz à Venise	175
CHIRAZ HOVHANNÈS. — Quatrains (Suite)	178
NECROLOGIE	
KURDIAN H. — La mort de l'armé- niste Prof. Ilia Aboulatzé	156
ECHO ARMENIEN	
DJANACHIAN P. MESROP. — Victor Hampartoumian à St. Lazare	181
RECENSIONS	
BEZDIKIAN P. HAROUTHIAN. — Les monuments arméniens du IV ^e au XVII ^e siècle — Edouard Utudjian	187
BEZDIKIAN P. HAROUTHIAN. — Ar- chitecture arménienne du moyen âge	189
BEZDIKIAN P. HAROUTHIAN. — Hakhpat — Documents d'architecture arménienne, N ^o 1	191



1843 - 1969
ՃԻԷ. ՏԱՐԻ
ԹԻԻ 4 - 7

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXVII^e année, 1969, N. 4 - 7

ՎԱՐԳ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ

2.

ՄԱՇՏՈՑԻ ՄԱՀԸ

ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ

(Շարք տե՛ս «Բազմավեպ» 1969, ք. 1-3, էջ 1)

ՀԱՄԱՐ ԱՄԱՅ ՀԱՄԱՅՈՑ

ԿԱՄ ՄԱՇՏՈՑԻ ԿՐՕՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Կորիւն յատուկ կարեւորութիւն տուած է Մաշտոցի կրօնաւորութեան թուակա- նին, եւ վերջապահին մէջ զայն երկու տարբեր հաշիւներով յիշած է: Այս կա- րեւորութեան պատճառը անշուշտ անոր համար էր որ Վարդին մէջ՝ սակաւ տո- ղերով անոր կեանքի գլխաւոր գիծերը նշելէ ետք, կարծես նոր գլուխ մը բա- նալով կ'ըսէր. «Եւ յետ այնորիկ ըստ ա- լետարանական չափուցն ի ծառայութիւն մարդասիրին դարձեալ՝ մեր- Աստուծոյ մարդասիրին դարձեալ՝ մեր- կանայր այնուհետեւ գիշխանակիր ցան- կութիւնսն, եւ առեալ զխաչն պարծա- յաց, երանէր զկնի ամենակեցոյց իմա- յոյն, եւ հաճեալ հրամանացն ի խաչա- կիր գունդն Քրիստոսի խառնէր, եւ ան- զէն ի միայնակեցական կարգ մտանէր»¹⁶: Այս յառաջաբանէն ետք, Կորիւն աւելի

լայնօրէն կը հիւսէ անոր վարքը, որ իր ամբողջ կեանքը պիտի ընդգրկէ: Հետե- ւաբար Կորիւնի համար Մաշտոցի կեան- քին այս անկիւնադարձը՝ նշանակալից թուական մը կը համարուի:

Դժբախտաբար վերջաբանին ներկայ վիճակը՝ այս մասին մէջն ալ խաթար- ուած է եւ կը կարօտի ճշտումի: Ահա այդ խաթարուած մասը. «Եւ արդ լինի համար հաւատոց երանելոյն ամբ քառա- սուն եւ հինգ, եւ ի գալրութենէն Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն ամբ երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւոր- եալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց, եւ Յազկերտի ամս քսան եւ մի, եւ յա- ռաջնում ամի երկրորդ Յազկերտի որդ- ւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին»¹⁷:

16. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ., էջ 38:

17. ԿՈՐԻՒՆ, Պատմութիւն վարդապետ (Հրտ. Վենե- տիկէ), էջ 48:

Մաշտոցի մահուան թուականը ճշտված ըլլալով, 440 Փետր. 17ին, անկէ քառասուն հինգ տարի հանելով կ'ունենանք 395 թուականը (440 — 45 = 395): Բայց այդ թուականը չի համապատասխաներ Կորիւնի երկրորդ հաշիւին, ուր կ'ըսուի. «Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրքւմնայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վառամայ...» (Անդ): Ըստ Նէօլտէքէի՝ Վառամ Կրքւմնայ զահ բարձրացած ըլլալու է 388ին, որով անոր չորրորդ տարին պիտի ըլլար 391/2 եւ ոչ 395: Այս պատճառաւ Ակինեան վերի թիւը ուղղած է քառասուն եւ եօթի, իրրեւ տառական սխալ խն եւ խի թիւերու միջեւ, որուն մենք ալ նախապէս հետեւած ենք: Բայց երբ Կորիւնի բոլոր հաշիւները նկատի առնուին՝ կարելի է գոհանալ այս սրբադրութեամբ, որովհետեւ Կորիւնի տուեալներու համաձայն՝ Համար հաւատոցի եւ Հայոց դպրութեան թուականներուն միջեւ տասնեւհինգ տարուան անջրպետ մը կայ, քանի որ Կորիւնի երկրորդ հաշիւին մէջ, Համար հաւատոցը՝ Կրքւմնայ թագաւորի չորրորդ տարին սկիզբ կ'առնէ. իսկ Հայոց դպրութեանինը՝ Յազկերտի ութերորդ տարին: «Եւ դպրութեան Հայոց յութեբորդ ամէն Յազկերտի առեալ ըսկիզբն»: Արդ ըստ Կորիւնի Համար հաւատոցի առաջին հաշիւին՝ Վառամ Կրքւմնայ չորրորդ տարին անգլին գեռ վեց տարի կայ, ապա Յազկերտի ութ տարիները վրան աւելցնելով՝ կ'ունենանք տասնեւհինգ տարուան անջրպետը, ընդ մէջ Գրոց գիւտի եւ Մաշտոցի կրօնաւորութեան սկզբնաւորութեան: Յետոյ, միշտ Կորիւնի համաձայն, «ի դպրութենէն Հայոց մինչեւ ցառաջին սրբոյն ամք երեսուն եւ հինգ». ուրեմն երկու թիւերու գումարը մեզի կու տան քառասուն եւ ինն տարի (35+14=49), որ պէտք է ըլլայ, համար ամաց սրբոց հաւատոցը: Ուստի այս ճշտումին հետեւանքով՝ Մաշտոցի կրօնաւորութեան թուականը պէտք է լինի 390/1ին (440—49=390): Այս

լականը պէտք է համապատասխանէ Վառամ Կրքւմնայ արքայի չորրորդ տարին. «Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրքւմնայ արքայի»: Մենք պիտի տեսնենք որ Կորիւնի հաշիւով՝ Կրքւմնայ արքայի զահակալութեան սկիզբը պէտք է նկատուի 387/8 եւ հետեւաբար չորրորդ տարին ալ 390/1, թէեւ ասիկա չհամաձայնի Նէօլտէքէի հաշիւներուն:

Հոս պէտք է նշենք, սակայն, կարեւոր սկզբունք մը՝ թէ մեր հին պատմիչներուն տուեալները պէտք է որ արդի պատմագէտներուն հաշիւներով մեկնուին, այլ իրենց իսկ դործածած հաշիւներուն համաձայն: Օրինակի համար Կորիւնի եւ Մ. Խորենացի Վառամ Կրքւմնայի կը վերագրեն տասը տարուան զահակալութիւն, մինչ արդի պատմագէտներու հաշիւով՝ տասնմէկ տարի զահակալած պէտք է ըլլայ ան: Հետեւաբար Կորիւնի կիրարկած ի չորրորդում ամէն բացատրութիւնը՝ չի կրնար այսօրուան պատմագէտներու ըստուգած թուականին հետ զուգարկալի: Նման է պարագան նաեւ Վառամ Ե. արքային համար, որուն զահակալութեան տարիներու թիւը, ըստ Մ. Խորենացիի, քսան մէկ տարի պէտք է եղած ըլլայ, մինչ նոր պատմագէտները՝ տասնեւեօթ կամ տասնեւինը տարի կը գնեն: Արդ Կորիւնի վերջաբանին մէջ մենք տեսնենք թէ տող մը բաց մնացած ըլլալով՝ հոն բացակայ է Վառամ Ե. ի զահակալութեան տարիներու թիւը, որով պիտի լրանար Մաշտոցի համար հաւատոցի տարիներու գումարը: «Եւ արդ առնու համար հաւատոց երանելոյն ամք քառասուն եւ հինգ (ուղղել քառասուն եւ ինն) մինչեւ ցառաջին սրբոյն: ... որք համարին այսպէս. թագաւորեալ Կրքւմնայ Պարսից արքայի ամս վեց, եւ Յազկերտի ամս քսան եւ մի [...] եւ յառաջնում ամի երկրորդ Յազկերտի, որդւոյ Վառամայ, վախճանեցաւ երանելին»¹⁸: Յայտնի է որ հոս բնագրին մէջ ինկած է Վառամ արքայի անունին եւ

18. ԿՈՐԻՆ, Պատմութիւն Վարդ, էջ 48:

զահակալութեան տարիներու յիշատակութիւնը: Այդ պատճառով՝ Արեղեան իր հրատարակութեան մէջ կը լրացնէ զայն աւելցնելով. [Եւ Վառամայ ութուտան ամ], որպէսզի համագումարը ելլէ քառասուն հինգ տարի, բնագրին մեզի հասած ընթերցումին համաձայն. (6 + 21 + 18 = 45): (Արեղեան՝ Սասանեան արքաներու զահակալութեան թուականներուն համար կ'օգտագործէ ներկայ պատմագիտութեան տուեալները, այսինքն Վառամ Կրքւմնայ 389-99, Յազկերտ 399-420, Վառամ Ե. 420-439, Յազկերտ Բ. 439)¹⁹: Ակինեան նոյն բացը կը լրացնէ՝ աւելցնելով [Եւ Վառամայ ամս ԺԺ], որպէսզի համագումարը հասնի քառասուն եօթի, ինչպէս ինք սրբագրած էր, հետեւելով Նորայր Բիւզանդացիի ամբ հաւատոցի թիւին. (6+21+19+1=47): Ակինեան իր հաշիւին մէջ առած է Յազկերտ Բ. ի առաջին տարին ալ²⁰, մինչ Արեղեան դուրս թողած էր: Հուսկ Նորայր Եպ.²¹ առաջարկած է նոր ընթերցում մը, աւելցնելով [Եւ Վառամայ ամս ԻԱ], որ եղածներուն մէջ ամէնէն յաջողը եւ ճշգրիտն է: Նախ իր տուած փաստերուն համար, քանի որ այդ ընթերցումին կը նպաստէ Մ. Խորենացիի վկայութիւնը, որ Վառամ Ե. արքային քսան մէկ տարուան թագաւորութիւն կու տայ. երկրորդ, լաւ կը բացատրէ վերոյիշեալ տողին անկումը՝ ներկայ բնագրին մէջէն, քանի որ երկու անգամ քսան եւ մի ընթերցումին կրկնութենէն դուրս ձգուած է երկրորդը՝ օրինակողին կողմէն: Հուսկ ասոր վրայ կ'աւելնայ մեր ճշտումին հետ համաձայնութիւնը. այսինքն Մաշտոցի համար հաւատոցի կ'ըլլայ ճշտարեւելու համագումարը կ'ըլլայ ճշտարեւելու քառասուն եւ ինն, ինչպէս ուղղած էինք վերը. (6+21+(21)+1=49): Հետեւաբար Կորիւնին վերջաբանը այսպէս կրնանք սրբագրել. «Եւ արդ ինի համար հաւատոց երանելոյն ամք քառասուն եւ ինն ի դպրութենէն Հայոց մինչեւ ցառաջին սրբոյն՝ ամք երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրքւմնայ Պարսից արքայի ամս վեց, եւ

Յազկերտի ամս քսան եւ մի [Եւ Վառամայ ամս քսան եւ մի], եւ յառաջնում ամի երկրորդ Յազկերտի, որդւոյ Վառամայ վախճանեցաւ երանելին»:

Տեսնենք այժմ Կորիւնի դործածած Սասանեան թագաւորներու զահակալութեան թուականներու գումարը, որ ինչպէս քսինք, լիով չեն համապատասխաներ արդի պատմագէտներու ստուգած թուականներուն հետ. բայց Կորիւնի բնագրին մէջ եղած թիւերը հասկնալու համար ալ, անհրաժեշտ է որ նկատի առնուին ոչ թէ ներկայ պատմիչներու ստուգած թուականները, այլ մեր իսկ պատմիչներու դործածած թուականներու գումարը: Ուստի մեկնակէտ առնելով Յազկերտ Բ. ի զահակալութեան թուականը, որ Կորիւնի դործածած է նշելու համար Ս. Սահակի եւ Մաշտոցի մահերը, իրրեւ 439/40, անկէ հանելով երեսուն հինգ տարիները, պիտի գտնենք Հայոց դպրութեան թուականը, այն է 404/5. որմէ կը հետեւցնենք Յազկերտ Ա. ի զահակալութեան տարին, այսինքն՝ 397/8. (ըստ Կորիւնի Հայոց դպրութիւնը պատահած է Յազկերտ Ա. ի ութերորդ տարին): Ունինք նաեւ Յազկերտ Ա. ի զահակալութեան տեւողութեան տարիներու թիւը Կորիւնի մօտ, որ քսան եւ մի ամբ ըսուած է. ուստի (397/8+21=418/419): Ասկից կը հետեւի անոր յաջորդին Վառամ Ե. ի զահակալութեան տարին, այն է 418/9-439/40, որով տեւողութեան տարիներն ալ ճշտու քսան մէկ տարի կ'ընեն եւ կ'արդարացնեն բնագրին պակասը լրացնող՝ Նորայր Եպ. ի առաջարկած ընթերցումը [Եւ Վառամայ ամս քսան եւ մի]: Յազկերտ Ա. ի նախորդին՝ Վառամ Կրքւմնայի համար ալ Կորիւնի մօտ ունինք տասը տարուան թագաւորած

19. ԿՈՐԻՆ, Վ. Մ. (Հրտ. Արեղեանի), էջ 98, 123/4, ծն. 173, 176:

20. ԱԿԻՆԵԱՆ, ԿՈՐԻՆ, Վարդ Մաշտոցի, Անդ, էջ 274, 320, ծն. 90:

21. ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿ., Կորիւնի ժամանակագրական վերջաբանը, Սիոն, 1962, Թ. 2-3, էջ 39-40:

ըլլալուն վկայութիւնը, որով կը ստուգուին անոր ալ դահակալութեան տարիները, այն է 387/8-397/8: Եւ հետեւաբար անոր չորրորդ տարին կ'ըլլայ 390/1, որ համար հաւատացի կամ Մաշտոցի կրօնաւորութեան թուականն է: Այս թուականի ստուգութեամբ կ'արդարանայ նաեւ մեր մտցուցած սրբադրութիւնը. «Եւ արդիւնին ամբ հաւատոց երանելոյն ամբ քա-

ռասուն եւ ինն»²². որոնք երբ աւելցնենք 390/1 թուականին վրայ՝ կ'ունենանք ճշտիւ Մաշտոցի մահուան թուականը, այն է 440:

Ամփոփելով մեր ըսածները հետեւեալ պատկերին մէջ, կու տանք Կորիւնի դործածած Սասանեան թագաւորներու դահակալութեան թուականներու դրութիւնը, ըստ նոյն պատմիչին տուեալներուն:

Վռամ Կրման՝ ամս տասն (387/8-397/8) || Ամբ հաւատոց Դ. ամէն (390/1)
Յազկերտ Ա.՝ ամս քսան եւ մի (397-418/9) || Հայոց դպրութիւն Ը. ամէն (404/5)
[Վռամ Ե.՝ ամս քսան եւ մի (418/9-439/440)]
Յազկերտ Բ. առաջին ամ (439/440) || Մահ Ս. Սահակայ (439) և Մաշտոցի (440)
Համար հաւատոց՝ ամբ քառասուն եւ ինն (6+21+(21)+1=49 (390/1-439/40)
Ամբ դպրութեան Հայոց՝ երեսուն եւ հինգ (404/5-439/40)

ԳՐՈՅ ԳԻՒՏԻ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՎՈՒՄՇԱՊՈՒՀ
ՀԱՅՈՅ ԹԱԳԱՒՈՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Կորիւնի վերջաբանի հաշիւներու այսքան ճշտումներէ ետք, պարտաւորուած ենք Գրոց զիւտի թուականը դնելու 404/5 տարուան ընթացքին: Այս թուականը արդէն առաջարկած են հինգերէն Գ. Տէր Մկրտչեան, Աճառեան եւ հուսկ Նորայր Եպս.²²: Բայց կարգ մը ուրիշ բանասէրներ 406/7 տարիներուն կը դնեն, ինչպէս վերջին ուսումնասիրողներէն Մ. Գրիգորեան եւ իրեն հետ Ա. Արքահամեան, որ իրրեւ վերջնական թուական մը կը նշէ 406ի Նոյեմբեր ամիսը²³. մինչ Արեւելէ 407ին, եւ Ակինեան 407/8 տարուան ընթացքին²⁴: Սակայն այս ամէնուն փառաբան Կորիւնի վերջաբանին յիշած վկայութիւնն է, այսինքն «Եւ դպրութեանն Հայոց յուրերորդ ամէն առեալ սկիզբն»: Միայն թէ անոնցմէ իւրաքանչիւրը՝ Յազկերտի դահակալութեան թուականը տարբեր տարիներ կը դետեղէ: Մենք տեսանք թէ այդ թուականին ճշտումին համար պէտք էին նկատի առնուիլ Կորիւնի հաշիւը եւ իր թուականներու դրութիւնը, որով կարելի էր միայն Գրոց զիւտի թը-

ւականը որոշել: Եւ իրապէս Մաշտոցի մահը դնելով Յազկերտ Բ.ի առաջին տարին, ըստ Կորիւնի վկայութեան եւ ըմբռնումին, կ'ունենայինք 439/40 թուականը, աւելի ճիշտ 440ի Փետրուար 17ը: Արդ «ի դպրութենէ Հայոց մինչեւ ցլախս» կ'ունենանք ճշտիւ 404/5 թուականը (439/40-35=404/405). նմանապէս «Եւ դպրութեան Հայոց յուրերորդ ամէն Յազկերտի առեալ սկիզբն» հաշիւը համեմատելով Յազկերտ Ա.ի դահակալութեան այն թուականին հետ որ Կորիւն կը ճանչնայ եւ կը դործածէ, այսինքն 397-418, կ'ունենանք դարձեալ 404/5 թուականը: Ասով կրնանք ըսել թէ Կորիւնի բոլոր հաշիւները զիրար բռնած կ'ըլլան

22. Գ. Տէր Մկրտչեան, Արարատ, 1912, էջ 504: ԱճԱՌԵԱՆ, Մեքոպ Մաշտոց, էջմիածին, 1962, Դ, էջ 32: ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ԱճԻ, էջ 40:
23. Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, ԱճԻ, էջ 73: Ա. ԱՐԻՍՏԱՄԵԱՆ, ԱճԻ, էջ 131: (Տես ծն. 97):
24. ԱՐԵՎԵԱՆ, ԿՈՐԻՆ, Վ. Մ., էջ 124, ծն. 176: Թէեւ միեւնոյն տեղը ան նշած է նաեւ 404 թուականը իրրեւ Գրոց զիւտի տարեթիւ: ԱԿԻՆԵԱՆ, Ս. Մաշտոց վարդ., Վիեննա, 1949, էջ 120: ԿՈՐԻՆ, Վարդ Մաշտոցի, էջ 320, ծն. 90:

եւ հետեւաբար անկէ առաջ եկած թուականները՝ թէ՛ ստոյգ եւ թէ՛ վճռական կը թուին մեզի:

Գրոց զիւտի թուականին հետ սերտօրէն կապուած է Վռամչապուհի, Հայոց թագաւորի դահակալութեան թուականը, քանի որ Կորիւն իր պատմութեան ընթացքին, երբ կը պատմէ Մաշտոցի Ասորիքէն վերադարձը՝ Հայոց նոր զիւրերու զիւտով, զայն կը դետեղէ Վռամչապուհի վեցերորդ տարին: Ասկից բնական է հետեւեցնել թէ Վռամչապուհի դահակալութեան թուականը պատահած պիտի ըլլայ 399ին, Յազկերտ Ա.ի դահակալութենէն երկու տարի ետք, ինչպէս կ'ընդունին վերջին չրջանի բոլոր պատմագէտները, տարի մը առաջ կամ ետք դնելով, նկատի առած՝ թէ ո'ր թուականին կը դնեն Գրոց զիւտը:

Սակայն այս ընդհանուր կարծիքէն կը հեռանայ Մանանդեան, որ հիմնուած Դ. Փարպեցիի վկայութեան, ինչպէս նաեւ Մ. Խորենացիին վրայ, Վռամչապուհի թագաւորի դահակալութիւնը կը համարի թէ եղած ըլլայ Խորով Գ.ի անկումէն անմիջապէս ետք, այն է 389ի առեւնները, Շապուհ Գ. (384-9) արքայի օրով եւ կարգադրութեամբ: Այս հիման վրայ Մանանդեան Գրոց զիւտի թուականը փոխադրած է 392ի եւ մերժած է Կորիւնի վերջաբանին հարադատութիւնը, դոնէ իր այժմեան ձեւին մէջ²⁵:

Մանանդեանի այս կարծիքը արդէն քննուեցաւ ու հերքուեցաւ անոնց կողմէ Գրոց զիւտի թուականը ուսումնասիրողներէն²⁶. մերժեցին անոր Մաշտոցի վարդէն վերջաբանին անհարադատ ըլլալու ենթադրութիւնը. սակայն Վռամչապուհի թագաւորի վերաբերեալ Մանանդեանի յարուցած հարցը՝ բաւարար կերպով չքննուեցաւ կամ լաւ եւս, դժացուցիչ բացատրութիւն կամ մեկնութիւն չունեցաւ:

Ա. Արքահամեան, որ ամէնէն աւելի եւ ուղղակի կերպով այս հարցով զբաղեցաւ, հետեւեալ պատճառները կը բերէ հերքելու համար Մանանդեանի կարծիքը. ա)

Դ. Փարպեցիի վկայութիւնը ի նպաստ Վռամչապուհի դահակալութեան՝ Շապուհ Գ. արքային օրով՝ արժէք չունի. որովհետեւ սխալ եւ հակասական ժամանակադրութեան վրայ հիմնուած է: Բ) Մ. Խորենացիի վկայութեան մէջ, որ Վռամչապուհի քսան մէկ տարուան դահակալութիւն տրուած է, պէտք են մտած ըլլալ հայ արքունիքի թափուր շրջանի տարիները: Գ) Ուստի ըստ Ա. Արքահամեանի, Խորով Հայոց թագաւորի դահակալութենէն մինչեւ Վռամչապուհի դահակալութիւնը՝ Հայոց արքունիքը թափուր մնացած է. եւ այդ շրջանին Հայաստան զեկավարուած է Առաւան անունով պարսիկ հաղարապետի մը կողմէն, զոր կը յիշէ Կորիւն, երբ Մաշտոցի մասին կը դրէ՝ թէ արքունի ծառայութեան մէջ մտած է «առ հաղարապետութեամբ աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն»: Դ) Արքահամեան մեծ վստահութիւն ցոյց կու տայ Սեբէոսի մօտ պահուած Արքայացանկին, որ իբր թէ 415ին կազմուած է, եւ Ակինեանի վերակազմած բնագրին համաձայն՝ Վռամչապուհի դահակալութեամբ պիտի ըլլայ Յազկերտ Ա.ի երկրորդ տարին, այն է 400/1ին²⁷:

Մեր կարծիքով Ա. Արքահամեանի առաջ բերած վերոյիշեալ պատճառները բաւարար չեն Մանանդեանի յարուցած հարցը՝ դժացուցիչ կերպով լուծուած համարելու: Նախ սկսելով Սեբէոսի Արքայացանկէն, ըսենք թէ Ակինեանի կողմէ անոր վերակազմումը՝ Կորիւնի տուեալներու հետ համաձայնեցնելու նպատակով եղած է: Ուրեմն այդ վերակազմեալ արքայացանկէն չի կրնար փաստուիլ ի նպաստ Կորիւնի: Թողունք որ այդ արքայացանկը իր ներկայ վիճակին մէջ

25. ՄԱՆԱՆԴԵԱՆ, Հայ գրքի գիտի տարեթիւի հարցի շուրջ, Մեքոպ Մաշտոց, Ա, էջ 104:

26. Վերոյիշեալ հարցով զբաղած են յատկապէս Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ եւ Ա. ԱՐԻՍՏԱՄԵԱՆ, որ ԳՐԻԳՈՐԵԱՆի յօդուածը աւելի ընդլայնած է, մանաւանդ Վռամչապուհի դահակալութեան հարցին մէջ: (Տես ծն. 97):

27. Ա. ԱՐԻՍՏԱՄԵԱՆ, ԱճԻ, էջ 120-124:

աւելի նպաստաւոր է Մ. Խորենացիի եւ Ղ. Փարպեցիի տեսակէտներուն: Բ) Ա. Աբրահամեան կ'ընդունի Մ. Խորենացիի վկայութիւնը, երբ կը գրէ. «Սխալ չէ նաեւ Պատմահայր Խորենացու տեղեկութիւնը, միայն թէ Խորենացին Վառաձապունի 21 տարուայ գահակալական շրջանի մէջ մտցրել է նաեւ հայկական արքունիքի թափուր տարիներէ շրջանը»²⁸: Սակայն այս ենթադրութիւնը ձրի հաւաստում կ'երեւի, քանի որ Մ. Խորենացի շատ լաւ գիտէ խնամքով նշել իր պատմութեան ընթացքին թափուր կամ անիշխանութեան տարիները: Այսպէս Վառաձապունի մահուան յաջորդող տարիներու պատմութիւնը գրած միջոց, յետ յիշելու Խորհով թագաւորի վերադարձը Հայոց Գահին վրայ՝ տարուան մը համար, կը յիշէ Շապուհ պարսիկ արքայորդուն գահակալութիւնը՝ չորս տարուան համար. որմէ վերջ Խորենացի կը գրէ. «Ուստի ազմկաւ եւ բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամանայր»²⁹: Մեր Պատմահայրը ուրիշ առիթներուն ալ միշտ նշած է անիշխանութեան տարիները, ուստի պատճառ մը չկար զանց ընելու Վառաձապունի գահակալութիւնը կանխող տարիներու ենթադրութեամբ թափուրը: Գ) Ա. Աբրահամեան այդ թափուր տարիներու գոյութիւնը կ'ուզէ մատնանշուած տեսնել Կորիւնի Վարքին մէջ, երբ ան կը պատմէ թէ Մաշտոց իր ուսումները լրացնելէ ետք, վերադարձին՝ հայրենիք մտաւ Հայոց արքունիքի ծառայութեան «առ հաղարապետութեամբ աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն»³⁰: Աբրահամեան կը խորհրդածէ. «Եթէ Մաշտոցը Վառաձապունի գահակալութեան տարիներին մտած լինէր արքունի ծառայութեան մէջ, ապա անկարելի էր որ Կորիւն, մեր այդ հայրենասէր պատմիչը, աչքաթող անէր Վառաձապունի առնունքը եւ յիշատակէր մի պարսիկ հաղարապետի անուն»³¹:

Այս խորհրդածութեան մէջ նկատելու է որ Մաշտոց, ինչպէս մեր ուսումնասիր-

ութեան սկիզբները գրած ենք, Հայաստանի վերադարձած է՝ իր ուսումները աւարտելէ ետք, Արշակ եւ Վաղարշակ երկու թագաւորներու օրերուն (380-385): Կորիւնի ըսածը զոնէ այս կերպով աւելի խմատ ունի. «Եկեալ հասեալ ի դուռն արշակունեաց թագաւորացն Հայոց մեծաց»³¹: Յետոյ Կորիւն չ'ըսեր թէ Մաշտոց արքունի ծառայութեան մէջ մտած է, այլ արքունի դիւանի ծառայութեան մէջ մտած. «Կացեալ յարքունական դիւանին լինել սպասաւոր արքայատուր հրամանացն» (Անդ): Այս փոքրիկ ճշտումը կրնայ բացատրել թէ ինչու կը յիշուի հաղարապետի անունը, քանի որ դիւանի գործերը ուղղակի եւ անմիջականօրէն ենթարկուած պիտի ըլլային հաղարապետութեան: Հուսկ Առաւան պարսիկ հաղարապետի մը անունը յիշելու մէջ՝ Կորիւն ունէր իր պատճառը. քանի որ, ինչպէս նախապէս ըսած ենք, Առաւան պարսիկ հաղարապետը՝ նոյն ինքն Խորհով թագաւորի ընկերացող Զիկ նուիրակն է, զոր Փաւստոս իր պատմութեան մէջ կը յիշէ, երբ կը պատմէ թէ Հայաստանի երկուքի բաժանումէն ետք, Պարսից Արքան՝ Հայոց գահին վրայ արշակունի մը թագաւոր կը զրկէր. «Ապա զըտանէ ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խորիւն, եւ կապեաց թագ ի գլուխ նորա եւ ետ նմա կին զքոյր իւր զԶրուանդուխտ, եւ արար ընդ նմա դամեանայն զգորս զօրութեան իւրոյ, եւ Զիկ նուիրակ դաստիարակ ետ արքային Խորիւնայ»³²: Զիկ յատուկ անուն ըլլալէ աւելի, պարսկական մեծ նախարարութեան տոհմային առնունքն էր եւ Առաւան՝ այդ տոհմէն անձնաւորութիւն մըն էր. ասիկա ցոյց տուած է արդէն Ակինեան. միայն թէ ան իր կատարած զիտողութենէն չի հաներ

28. Ա. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Անդ, էջ 124:

29. Մ. ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, Գ., ԾԶ (էջ 529):

30. Ա. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Անդ, էջ 124:

31. ԿՈՐԻՒՆ, Վ. Մ., էջ 36:

32. Փ. ԲԻԻԶԱՆԿԱՅԻ, Պատմութիւն, 2, ա. (էջ 245/6):

այն հետեւանքը, որ մենք կը հանենք, այսինքն, Առաւան հաղարապետութեան պաշտօնը Խորիւնի թագաւորութեան օրով կատարելէ ետք, կը համարի թէ Խորիւն Գ.ի մահէն (գահընկէցութենէն) յետոյ Պարսից արքունիքէն Հայաստանի մարդկան կարգուած ըլլար (387-400)³³: Այս հաւաստումի մասին Ակինեան որեւէ պատմական փաստ չի բերեր. եւ արդէն չկայ պատմական որեւէ վկայութիւն՝ Առաւանի մարդկանութիւնը փաստող, այլ միայն՝ հաղարապետ. այդ պաշտօնը ան վարած է Խորիւն թագաւորի ժամանակ, եւ Մաշտոց՝ այդ օրերուն է որ արքունի դիւանին մէջ ծառայած է: Ասկէ կը հետեւի որ՝ թէ եւ Մաշտոց՝ Արշակ ու Վաղարշակ թագաւորներու օրով Հայաստան վերադարձած էր, բայց Խորիւն թագաւորի ատեն արքունի դիւանին մէջ ծառայողութեան մտած է, ինչպէս Ղ. Փարպեցի յայտնի կերպով կը վկայէ. «Զինուորեալ ի դուռն արքային Խորիւնայ»³⁴: Առաւան հաղարապետի ձեռքին առի զործած է, իրրեւ անոր անմիջական պաշտօնեան. որով Կորիւն պատշաճ դատած է յիշել «մի պարսիկ հաղարապետի անուն» եւ ոչ Վառաձապուն թագաւորին, որ զեռ գահ ղարձրացած էր: Դ) Համակարծիք ենք բարձրացած չէր: Դ) Աբրահամեանի ըրած ընդհանրական Ա. Աբրահամեանի ըրած հերքումին Մանանդեանի այն կարծիքին՝ թէ Վառաձապուն Հայոց գահը զրաւած ըլլայ Շապուհ Գ. (384-389) Պարսից արքային ձեռքով: Ան հիմնած է իր այս կարծիքը՝ Ղ. Փարպեցիի վկայութեան մը վրայ, ուր կ'ըսուի թէ Խորիւն թագաւորը Շապուհի կողմէ վար առնուեցաւ եւ Հայոց խնդրանքին վրայ, նոյն արքան՝ Վառաձապունը, Խորիւնի եղբայ-

րը, Հայոց թագաւոր կարգեց: Հոս նշելու ենք որ Փարպեցի Շապուհ Բ.ի մասին կը խօսի, թէ եւ կարելի էր ընդունել որ երկու անուններու նոյնութենէն ծագած ըլլայ շփոթութիւնը: Բայց ճիշտ է Աբրահամեանի զիտողութիւնը, թէ Ղ. Փարպեցիի համաձայն՝ Վառաձապուն երկար տարիներ թագաւորելէ ետք մեռած է եւ ապա, անկէ յետոյ մեռած է Շապուհ, որուն կը յաջորդէ Վառաձապուն: Ասկէ արդէն կը հետեւի որ հոս խօսքը ուղղակի Շապուհ Գ.ի մասին էր, որ մեռաւ 389ին եւ որուն յաջորդեց Վառաձապուն: Արդ կը խորհրդածէ Աբրահամեան. «Եթէ ճիշտ համարինք Ակադ. Մանանդեանի Փարպեցու տեղեկութեան վրայ մատնացոյց արած Վառաձապունի գահակալութեան սկիզբը 387/8 թուականներին եւ ընդունենք Փարպեցու հաղորդած այս տեղեկութիւնը, որ Վառաձապունը մահացել է Շապուհի մահից առաջ, 389ին, ապա ստացուում է մի կատարեալ անհեթեթութիւն»³⁵: Մենք համաձայն ենք որ այդպիսի անհեթեթութիւն կայ, եւ չենք կարծեր որ Վառաձապուն Հայոց գահը ստացած ըլլայ Շապուհ Գ.ի ձեռքէն. բայց ասկէ չենք հետեւցներ թէ ան 400/1ին թագաւոր եղած ըլլայ:

Ղ. Փարպեցիի եւ Մովսէս Խորենացիի պատմութեան մէջ, ինչպէս նաեւ Սերէոսի Արքայացանկին համաձայն, Վառաձապուն անմիջական յաջորդն է Խորիւն թագաւորի: Պատմահօր համաձայն՝ ան քսան մէկ տարի թագաւորած է. զիտենք թէ Խորենացիի այն տեղեկութիւնները որ թագաւորներու կամ կաթողիկոսներու պաշտօնի տեղեկութեան տարիներուն կը վերաբերին՝ ընդհանրապէս պատմական

33. ԱԿԻՆԵԱՆ, Ս. Մաշտոց վարդ., էջ 27/8: Ակինեան խօսած է Զիկ նուիրակի մասին իր կողմէ վարդ. եւ իւր Պատմութիւն Հայոց պատմութեան (գրքին մէջ), հա. Բ, էջ 363-465: Միայն թէ ան կը համարի որ Զիկ պաշտօնի անուն ըլլայ մինչ Գրիգորիոսի դայն կը դասուի Պարսկաստանի եթ գլխաւոր տոհմերու կարգին, եւ կը նշէ թէ Բիւզանդացիները Զիկը համարած են պաշտօնի անուն, բայց

անունը, կը գրէ հեղինակը, կը շփոթէին պաշտօնները տոհմերուն հետ: (CHRISTENSEN, «L'Iran sous les Sassanides», Paris, 1936, p. 99.

34. Ղ. ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն, էջ 34: Գուցէ Ղազար Կորիւնի նախնական ընդդէմէն մէջ տեսած էր Խորիւն թագաւորի անունը:

35. Ա. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Անդ, էջ 122/3:

աղբիւրէ կամ դիւանական տեղեկութիւններէ քաղուած ըլլալին ցոյց կու տան, եթէ ան իր կողմէն չուզէ դանոնք մեկնաբանել: Այդպէս չեն ընդհակառակն Հայոց թագաւորներու ժամանակակիցութեան համեմատութիւնները օտար թագաւորներուն հետ, ուր սխալ մեկնակէտէ սկսած ըլլալով անճիշտ զուգորդութիւններ յառաջ բերած է: Ուստի մեր պարագային, օրինակի համար, չենք կրնար ընդունիլ անոր վկայութիւնը թէ Վառաձապուհ՝ թագաւոր կարգուած ըլլայ Արտաշէր արքային կողմէն (379-383): Մինչդեռ շատ աւելի ճիշտ կը թուի Սեբէոսի Արքայացանկին տեղեկութիւնը, թէ «Ի Զ. երորդի ամի Վառաձապ Պարսից արքային, թագաւորէ Հայոց Վառաձապուհ արքայ, ամս Ը»³⁶: Հոս ալ անշուշտ սխալ մըն է ութ տարիներու տեւողութեան հաւաստումը, ինչպէս սխալ է նոյն տեղ եղած համեմատութիւնը՝ Բիւզանդական կայսրի հետ. «Յամի ԺԴ. երորդի Արկադեայ կայսեր» քանի որ Արկադէս 395ին դահ բարձրացած ըլլալով՝ չէր կրնար զուգորդուիլ Վառաձապ արքային վեցերորդին հետ, որ 393ին կամ 395ին կը հանդիպէ:

Սակայն Վառաձապ Կրմանի դահակալութեան թուականին համար ալ, ինչպէս արդէն տեսանք, ժամանակակից մեր պատմիչներէն, Կորիւն, տարբեր թուական մը կը վերագրէ քան ինչ որ այսօրուան պատմագէտները կ'ընդունին. բայց մենք մեր պատմիչներու տուեալները ըստուգելու համար՝ աւելի ճիշտ կը գտնենք անոնց գործածած թուականներու դրութեան հետեւիլ, քան զանոնք յարմարցնել մեր այսօրուան ստուգումներուն: Ուստի Կորիւնի համաձայն, ինչ-

պէս վերի ցուցակին մէջ կ'երեւի, Վառաձապ Կրման 387/8ին դահ բարձրացած ըլլալով, անոր վեցերորդ տարին կ'ըլլայ 392/3 թուականը: Ասիկա իբրեւ Վառաձապուհի դահակալութեան թուական դիտէ նաև Մ. Խորենացին, որովհետեւ ան Ս. Սահակի կաթողիկոսութեան տեւողութիւնը 5 տարի կը դնէ, եւ անոր կաթողիկոսութեան սկզբնաւորութիւնը՝ Խորենով թագաւորի դահակալութեան երկրորդ տարին³⁷: Ուստի Ս. Սահակի մահուան թուականը ճշտուած ըլլալով 439ին, անկէ 51 տարի հանելով կը հասնիք 388ին: Միւս կողմէ Պատմահայրը Խորենով թագաւորի դահակալութեան տեւողութիւնը հինգ տարի դիտէ, որմէ ետք դահ կը բարձրանայ Վառաձապուհ. ուրեմն այս վերջինիս դահակալութեան թուականը ճշտել կ'ըլլայ 392/3ին (387+5-392/3): Դարձեալ Խորենացիի ուրիշ տուեալներով ալ նոյնը կը փաստուի: Այսինքն, Վառաձապուհ, ըստ Պատմահայր, 21 տարի թագաւորած է, որ աւելցնելով 392/3 թուականին վրայ՝ կը հասնին 413/4 տարուան. որմէ ետք Խորենով կրկին թագաւոր կ'ըլլայ տարուան մը համար (414-5). ապա Յաղկերտ Ա. իր որդին՝ Շապուհը Հայոց դահին վրայ կը դնէ, որ միայն չորս տարի կրնայ հոն մնալ (415-9): Ասոր կը յաջորդեն անիշխանութեան երեք տարիները (319-322): Ապա կը թագաւորէ Արտաշէս՝ վեց տարի (422-8), մինչեւ որ դահնկէց կ'ըլլայ Ս. Սահակի հետ: Սահակի դահնկէցութենէ ետք, Կաթողիկոսութեան աթոռը կը դրուէ Սուրմակ տարի մը, ապա Բրքիշոյ՝ երեք տարի, և Շմուէլ՝ հինգ տարի, որմէ վերջ կը վախճանի Ս. Սահակ: Այս հաշիւն ալ կու գայ հաստատելու որ Վառաձապուհ

թէեւ քննարկին մէջ յերրորդ ամիս դրուած է, բայց յայտնի է որ յերկրորդ պէտք է ըլլայ. որովհետեւ Հայաստանի բաժանումը եղած է 387ին եւ Խորենով նոյն տարին դահակալած. ուրեմն երկրորդ տարին պիտի ըլլայ 388, որուն վրայ աւելցնելով 51 տարիները կ'ունենանք 439 թուականը, Սահակի մահուան ըստուգուած տարեթիւը:

Հայոց դահը բարձրացած է 392/3 թուականին, ինչպէս կը վկայէր Սեբէոսի Արքայացանկը:

Սակայն տակաւին հարկ է բացատրել թէ ինչպէս պէտք է հաշտեցնել այս թուականը՝ Կորիւնի այն վկայութեան հետ, որ Գրոց դիւտը կը դնէ Վառաձապուհ արքային վեցերորդ տարին, քանի որ Գրոց դիւտը պատահած է 404ին եւ Վառաձապուհ դահակալած է 392/3ին:

Այս հարցին լուծումը տալու համար հարկադրուած ենք ենթադրութեան մը դիմել, որովհետեւ մէկ կողմէն պատմականօրէն փաստուած կը կարծենք թէ Վառաձապուհ Խորենովի անմիջական յաջորդ կարգուած է 392ին. միւս կողմէն Կորիւնի վկայութեան համաձայն Գրոց դիւտը եղած է 404ին, որ Վառաձապուհի դահակալութեան վեցերորդ տարին էր, եւ հետեւաբար նոյնքան պատմականօրէն փաստուած թէ Վառաձապուհի դահակալութեան սկիզբը եղած է 399ին: Արդ հարցը լուծելու համար հետեւեալ ենթադրուցը լուծելու համար հետեւեալ ենթադրութիւնը կ'ընենք. Վառաձապուհ արդեամբ (De facto) յաջորդած է Խորենովի 392ին, բայց իրաւամբ (De jure) միայն 399ին կրցած է թագաւորի տիտղոս եւ իրաւունք ստանալ:

Մեր այս ենթադրութեան բացատրութիւնը կը կարծենք գտնել պատմական այն պարագաներուն մէջ, ուր Հայոց դահը գտնուեցաւ Հայաստանի բաժանումէն ետք: Երբ 387ին Հայաստան երկուքի բաժնուեցաւ՝ Արշակ Դ. թագաւորը բիւզանդական կողմը քաշուեցաւ, մինչ զանդական կողմը քաշուեցաւ, մինչ պարսկական բաժնին մէջ՝ Տիգրանի արմատէն Խորենով անունով մէկը, քովը ինամակալ կամ դատարարի գնելով Զիկ նուիրակը կամ Առաւան հաղարարեալ³⁸:

Արշակի մահէն ետք, Բիւզանդիոնի քաղաքականութիւնը չվարանցաւ հոն բիւզանդացի կոմս մը ղրկել՝ յանձնին Անտիոքոս սպարապետի, եւ հայկական իշխանութիւնը վերցնել անկէ: Մինչդեռ Պար-

սից արքունիքը այդպիսի քայլ մը առնելու համար՝ պիտի սպասէր դրեթէ կէս դար, չուզելով անշուշտ հայ նախարարներու ընդդիմութեան դիմաց գտնուիլ. քանի որ իր բաժինը համեմատութեամբ բիւզանդականին՝ հինգ անգամ աւելի էր եւ պէտք ունէր տեղական ուժերու օժանդակութեան, որպէսզի իր դերիշխանութիւնը Հայաստանի մէջ ապահով եւ մնալուն հանգամանք ստանար: Բայց, երբ հայ նախարարները իրենց արշակունի թագաւորը Տիգրանի առջեւ ամբաստանեցին եւ նախընտրեցին պարսիկ մարզպանի մը ձեռքով կառավարուիլ, Պարսից արքունիքը բոլոր յօժարութեամբ իրագործեց իր ցանկացած ծրագիրը: Արդ Խորենով թագաւորի դահնկէցութիւնը, Պատմահայր տուած տեղեկութիւններուն նախելով, ոչ թէ հայ նախարարներու սաղաքէն տեղի ունեցած էր, այլ Տիգրանի արքունիքին նախաձեռնութեամբ. որովհետեւ Խորենով, Արշակ թագաւորի մահէն ետք, դիմում բրած էր Բիւզանդիոնի կայսեր՝ որ անոր բաժնի Հայաստանն ալ ինք կառավարէ³⁹: Այսպիսի արարք մը Տիգրանի մէջ ապստամբութիւն նկատուեցաւ եւ Խորենով արքունիք կանչուելով դահակալի եղաւ եւ Անյուշ բերդը արքունեցաւ: Բայց պատմական ոչ մէկ վկայութիւն ունինք թէ արքայից արքան այս առթիւ Հայաստան ղրկած ըլլայ պարսիկ մարզպան մը: Այսպիսի փոփոխութիւն մը անպայման պէտք էր արձանագրուած ըլլար մեր պատմական աղբիւրներու մէջ, վասն զի խոշոր եւ արմատական փոփոխութիւն մը պիտի նշանակուէր ասիկա: Առաջին պարսիկ մարզպանի մը յիշատակութիւնը ունինք վերջին արշակունի թագաւորի դահնկէցութենէն ետք, յանձնին Վեհ-Միհր-Շապուհի: Անկէ առաջ ալ Յաղկերտ Ա. փորձած էր արշակունի թագաւորի տեղ՝ իր որդին, Շապուհը, Հայոց դահի վրայ դնել. բայց փորձը ցոյց տուաւ որ հայ նախա-

36. Սեբէոս ԵՊՍ., Պատմութիւն (հրատ. Ստ. Մալխասեան), Երեւան, 1939, էջ 19:

37. Մ. Խորենացի, Պատմութիւն, Գ., Կէ. (էջ 566): «Ուր եհաս վախճան (Սահակայ), կեցեալ եպիսկոպոսապետութեամբ ամս յիսուն եւ մի սկսեալ յերրորդ Հայոց արքայի, մինչ վերջնոյ Խորենովայ Հայոց արքայի, մինչեւ ցսկիզբն ամին երկրորդի Յաղկերտի»:

38. Տես ծն. 32:

39. Մ. Խորենացի, Պատմութիւն, Գ. Ծ.:

